

Կ. ՊՈԼՍԵՑԻՆ

«Չո՞րն ասեմ կամ զո՞րն խոստովանիմ»

Բաբելոնէն Բիւզանդիոն գաղթած վիուկ մը տարօրինակ հաւաքածոյ մը կը կազմէ՝ ի մի բերելով Կեսարացիի մը գլուխը, Ակնցիի մը ուղեղը, Վանեցիի մը ջիղերը, Կարնեցիի մը բերանը, Խրիմցիի մը կոկորդը, Խարբերոցիի մը ճկունութիւնը, Պիթիսցիի մը արիւնը, Պրուսացիի մը կուրծքը, Չէնկիւերցիի մը ձեռքը, Կիլիկեցիի մը սիրտն ու լեզուն եւայլն, եւայլն, եւայլն:

Դժոխքէն թարմ կրակ բերել կուտայ, որոնց վրայ կը զետեղէ ահագին կաթսայ մը՝ մէջը լեցնելով առատ Տերթոզի ջուր եւ իր ժողովածոն կը թափէ ու կը խաշէ: Եփ մը գալէ վերջ կ'աւելցնէ ճենովացիի մը աչքն ու ականջը, քիթն ու քիմքը եւ երիկամունքը, Եէնիչերիի մը խռչափողն ու ստամոքսը, ինչպէս նաեւ Ֆրէնկի մը փայլուն մորթը, սատանայի մըն ալ պոչը ու կը սկսի խառնել:

Ու մեր թուած նիւթերով կազմուած մածոյցէն Բաբելացի վիուկը կը շինէ մարդ մը, որուն անունն է Պոլսեցի:

Երբ կը ծնի գաւառակազմ Պոլսեցին, իր առաջին ու սրբազան պարտականութիւնը կ'ընէ չհաւնիլ իր նախահարց եւ նկատել ինքզինքը Նրբենի, տաշեալ, եփեալ ու աղեալ կատարելատիպ Զայը:

Եթէ յանուն գիտական հետազոտութեան, պատռենք Պոլսահայուն մարմինը՝ նայելու համար, թէ «ինչե՛ր կերած է», պիտի գտնենք ահագին քանակութեամբ *մահալլէպի*, անուշապուր, *գէրտէ*, *փելլթէ*, որթի տերեւ, սմբուկ, բրինձ, առատ լուբիա, *փալամուտ*, ջուր, օղի, Նորէն օղի ու Նորէն ջուր, հազար, վարունգ եւ գաւառացիի միս:

Պիտի տեսնենք, որ Պոլսեցին տակաւին կերած կամ կլլած է ընթերցասիրութիւնը, եղբայրասիրութիւնը, բայց մանաւանդ՝ հայրենասիրութիւնը:

*

Պոլսահայը շատ կը սիրէ Աստուածամայրը, բնութիւնը եւ օղին: